

բառը միայն Վիշապապաշտութիւն ձեռով տանելի է Հայոց՝ եւ իրենց նախաբնիկ նախորդներուն՝ տեսակէտով, եւ միայն նկատի առնենք թէ պաշտամունքի առարկաներուն եւ քանդակներուն մէջ Վիշապն ալ ներկայացուած էր։ Ասոր մէկ աւելի որոշ ապացոյցը ուսումնասիրութեանս սկիզբը ներկայացուած Սարգոնի



Ballard Collection

Թանգարանը գորգին համար գրած է «Կովկասեան ԺԲ դարէն, Սումաք կոչուած» չափ $10^0 \times 6^2$ ։ Գորգը իրապէս հայկ. Վիշապ գորգերէն ծագած զծագրութիւն մը ունի, թէեւ աւելի կոշտ եւ պարզուած ու նախնականացած։ Սումաք (Շամախ) շրջանին (որ հայկական ազդեցութեան տակ է) հիւսուած կրնայ ըլլալ, սակայն Վիշապ գորգերէ առաջ եկած, որով պարզապէս հայկական է։



կողմէ Ասոր աստուծոյ գրուած նաժական ցանկին մէջ է, ուր կը թուուի Ուրարտական Խալտիսի տաճարէն կողոպտուած իրերուն կարգին «սսկեծոյլ կերպը Ապուպուի կամ ջրհեղեղի-վիշապին, մարդու ձեռքի մը վրայ նստած», նաեւ «12 արծաթ վահաններ զարդարուած... Ապուպուով»։ Անտարակոյս Հայ հիւսողը կամ բանողը եւ իր գծագրիչները տաճարին վարագոյրներուն, ծածկոցներուն, կրօնական զգեստներուն, եւ նաեւ գորգերուն մէջ գործածեցին Ապուպուն կամ վիշապը, եւ հետզհետէ եղաւ գծածեւ մը որ իր բարի նշանարանով ժողովրդականացաւ տարածուեցաւ նախահայոց մէջ, ասիկա Արիական որեւէ շարժումէ շատ առաջ սկսած էր արդէն։ Արիականը որ փոքրաթիւ տիրապետող դասակարգ մըն էին, կամ անհոգութեամբ կամ տգիտութեամբ եւ կամ արհեստից մէջ իրենց անձեռնհասութեամբ, չկրցան վիշապը բուն ժողովրդեան արհեստական դասակարգէն դուրս հանել։ Արիական ազդեցութիւնը ըստ իս Քրիստոսէ 500 տարի առաջ միայն սկսաւ, կրօնքի, լեզուի եւ որով գրականութեան մէջ ի Հայաստան։ Անոնց Վիշապաքաղ Վահագնը այդ դարերուն կերպաւորում եւ ստեղծագործումը միայն կրնայ ըլլալ։ Իսկ Հայ արհեստները ու արուեստները որոնք աւելի աշխարհական էին լեզուին եւ գրականութեան նման շուտով տեղի չտուին Արիականացման. քիչ աւելի վերջ պիտի տեսնենք թէ Սեմականացումը (կրօնքին, Քրիստոնէութեան միջոցաւ) նուազ յաջողութիւն ունեցաւ նոյն իսկ կրնամ ըսել արուեստից մէջ (ինչպէս գորգաշինութեան) ձեռք բերուած յաջողութիւնը երրորդական իսկ չէր։

Վիշապը հին Հայ գորգաշէնին կը հայթայթէր գծածելի առատ նիւթ եւ աղբիւր, անոր երեւակայութեան անկապտող հանգամանքով, կը խորհրդանշէր խէր-բարաքեաթ, բարութիւն, առատութիւն, շէնութիւն եւ ինչպէս որ ցոյց պիտի տամ՝ գորգը իր վիշապով նոյն իսկ օգնական սեպուեցաւ մայրութեան, տղաբերքի, ամ-